

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՏԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՅՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՆԱԸ

ԿԻՐԱԿԻ 19 Ապրիլ 2020

159

DIMANCHE, 19 Avril 2020

## ԿՐԿՆԱԶԱՏԻԿ ՆՈՐ ԿԻՐԱԿԻ



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
stgregorychurch@gmail.co | www.saintgregory.ca

**ՆՈՐ ԿԻՐԱԿԻ**  
**NOUVEAU DIMANCHE**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**  
**ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ**

**5.34-6.7**

**ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ**  
**ՆԱՄԱԿԷՆ**

**3.1-12**

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**  
**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ**

**1.1-17**

**Les lectures de la Bible d'aujourd'hui :**

**JACQUES 3.1-12**

**JEAN 1.1-17**

**Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ**

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

**Célébrant: Prêtre Paroissial**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

<b>Առաւօտեան ժամերգութիւն ժամը-</b>	<b>9:30-ին</b>
<b>Office Matines à</b>	<b>9h30</b>
<b>Ս. Պատարագ ուղիղ սփռում ժամը-</b>	<b>10:30-ին</b>
<b>La Sainte Messe - Live à</b>	<b>10h30</b>
<b>Հոգեհանգիստ ուղիղ սփռում ժամը-</b>	<b>12:30-ին</b>
<b>Requiem - Live à</b>	<b>12h30</b>

**Deacons - Acolytes**

# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՅԱԿՈՒՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

3.1-12

Եղբայրներս, շատ վարդապետող մի՛ ըլլաք, գիտնալով որ աւելի մեծ դատաստան պիտի ընդունինք. Վասն զի ամէնքս ալ շատ յանցանքներ կ'ընենք. եթէ մէկը խօսքով յանցանք չընէ՝ անիկա կատարեալ մարդ է, որ կարող է բոլոր մարմինն ալ սանձել: Գիտէք թէ ձիերուն բերանը սանձ կը դնենք, որպէս զի անոնք մեզի հնազանդին ու անոնց բոլոր մարմինը կը կառավարենք. Ահա նաւերն ալ որչա՛ս փ մեծ բաներ են եւ սաստիկ հովերէն կը քշուին, բայց շատ փոքր դէկով մը կը կառավարուին՝ դէկավարին կամքը ո՛ր կողմը որ ուզէ: Այսպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, բայց մեծ բաներ կը խօսի: Ահա քիչ մը կրակը ո՛ր յշափ բան բոցի կու տայ: Լեզուն ալ կրակ մըն է, անիրաւութեան տիեզերք մը: Լեզուն մեր անդամներուն մէջ այնպէս դրուած է, որ բոլոր մարմինը կ'ապականէ եւ բնութեան շրջանը կը բռնկեցնէ ու ինք գեհեանէն կը բռնկի:

Բոլոր գազաններուն ու թռչուններուն եւ սողուններուն ու ծովուն մէջ եղածներուն բնութիւնը կը նուաճուի եւ նուաճուած է մարդկութենէն: Բայց մարդ լեզուն չի կրնար նուաճել: Անիկա անգուսպ չար է ու մահաբեր թոյնով լեզուն: Անով կ'օրհնենք Աստուած ու Հայրը եւ անով կ'անիծենք մարդիկ՝ որոնք Աստուծոյ նմանութիւնովը ստեղծուած են:

Միեւնոյն բերնէն կ'ելլեն օրհնութիւն ու անէծք: Ե՛ղբայրներս, պէտք չէ որ այս այսպէս ըլլայ: Միթէ աղբիւր մը միեւնոյն բերնէն անոյշ ու լեղի կը բխեցնէ՝

Միթէ կարելի՞ է, եղբայրներս, որ թզենին ձիթապտուղ բերէ կամ որթատունկը՝ թուգ: Նմանապէս կարելի չէ որ աղբիւրէ մը աղի ու անոյշ ջուր հոսի:

## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1.1-17

Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր: Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ: Կեանքը անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը զանիկա չճանչցաւ:

Աստուծմէ դրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր: Ասիկա վկայութեան համար եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնքը անոր միջոցով հաւատան: Ինք չէր այն Լոյսը, հապա եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ:

Ճշմարիտ Լոյսը ան է, որ աշխարհի եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր եւ աշխարհ անով եղաւ, բայց աշխարհ զանիկա չճանչցաւ: Իրեններուն եկաւ, սակայն իրենները զինք չընդունեցին: Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը. Որոնք ո՛չ արիւնէ եւ ո՛չ մարմնի կամքէ, ո՛չ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան: Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ անոր փառքը տեսանք՝ չորմէն միաձնի փառքին պէս, շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն:

Յովհաննէս վկայեց անոր համար եւ աղաղակեց ըսելով. «Ասիկա է, որուն համար կ'ըսէի. 'Ան որ իմ ետեւէս կու գայ, ինձմէ առաջ եղաւ, վասն զի ինձմէ առաջ էր'»: Եւ անոր լեցունութենէն մենք ամէնքս շնորհք առինք շնորհքի տեղ: Վասն զի օրէնքը Մովսէսին ձեռքով տրուեցաւ, բայց շնորհքը եւ ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսին ձեռքով եղան:

### JACQUES 3.1-12

Mes frères, ne soyez point plusieurs maîtres; sachant que nous [en] recevrons une plus grande condamnation. Car nous péchons tous en plusieurs choses; si quelqu'un ne pêche pas en paroles, c'est un homme parfait, et il peut même tenir en bride tout le corps. Voilà, nous mettons aux chevaux des mors dans leurs bouches, afin qu'ils nous obéissent, et nous menons çà et là tout le corps. Voilà aussi les navires, quoiqu'ils soient si grands, et qu'ils soient agités par la tempête, ils sont menés partout çà et là avec un petit gouvernail, selon qu'il plaît à celui qui les gouverne. Il en est ainsi de la langue, c'est un petit membre, et cependant elle [peut] se vanter de grandes choses. Voilà [aussi] un petit feu, combien de bois allume-t-il? La langue aussi est un feu, [et] un

monde d'iniquité; [car] la langue est telle entre nos membres, qu'elle souille tout le corps, et enflamme [tout] le monde qui a été créé, étant elle-même enflammée [du feu] de la géhenne. Car toute espèce de bêtes sauvages, d'oiseaux, de reptiles, et de poissons de la mer, se dompte, et a été domptée par la nature humaine. Mais nul homme ne peut dompter la langue : c'est un mal qui ne se peut réprimer, [et] elle est pleine d'un venin mortel. Par elle nous bénissons [notre] Dieu et Père; et par elle nous maudissons les hommes, faits à la ressemblance de Dieu. D'une même bouche procède la bénédiction et la malédiction. Mes frères, il ne faut pas que ces choses aillent ainsi. Une fontaine jette-t-elle par une même ouverture le doux et l'amer? Mes frères, un figuier peut-il produire des olives? ou une vigne des figues? de même aucune fontaine ne peut jeter de l'eau salée et de [l'eau] douce.


### **JEAN 1.1-17**

Au commencement était la Parole, et la Parole était avec Dieu; et cette parole était Dieu : Elle était au commencement avec Dieu. Toutes choses ont été faites par elle, et sans elle rien de ce qui a été fait, n'a été fait. En elle était la vie, et la vie était la Lumière des hommes. Et la Lumière luit dans les ténèbres, mais les ténèbres ne l'ont point reçue.

Il y eut un homme appelé Jean, qui fut envoyé de Dieu. Il vint pour rendre témoignage, pour rendre, dis-je, témoignage à la Lumière, afin que tous crûssent par lui. Il n'était pas la Lumière, mais il [était envoyé] pour rendre témoignage à la Lumière.

[Cette] Lumière était la véritable, qui éclaire tout homme venant au monde. Elle était au monde, et le monde a été fait par elle; mais le monde ne l'a point connue. Il est venu chez soi; et les siens ne l'ont point reçu; Mais à tous ceux qui l'ont reçu, il leur a donné le droit d'être faits enfants de Dieu, [savoir] à ceux qui croient en son Nom; Lesquels ne sont point nés de sang, ni de la volonté de la chair, ni de la volonté de l'homme; mais ils sont nés de Dieu.


Et la Parole a été faite chair, elle a habité parmi nous, et nous avons contemplé sa gloire, [qui a été] une gloire, comme la gloire du Fils unique du Père, pleine de grâce et de vérité. Jean a [donc] rendu témoignage de lui, et a crié, disant : c'est celui duquel je disais : celui qui vient après moi m'est préféré, car il était avant moi. Et nous reçu de sa plénitude, et grâce pour grâce. Car la Loi a été donnée par Moïse; la grâce et la vérité est venue par Jésus-Christ.



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

### ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՍ ԿՐԿՆԱԶԱՍԻԿ ԹՈՎՄԱՍԻ ԹԵՐԱՀԱԻԱՏՈՒԹԻՒՆԸ

«Եթէ չտեսնեմ Անոր ձեռքերուն վրայ մեխերուն նշանը եւ իմ մատներս մեխերուն տեղը չդնեմ ու իմ ձեռքս Անոր կողը չխրեմ, չեմ հաւատար» (Յովհ. 20:25):



Միրելիներ,

Յովհաննէս Աւետարանիչին 20-րդ գլխուն 24-29 համարներուն մէջ կը խօսուի Թովմաս Առաքեալին թերահաւատութեան մասին: Ըստ Աւետարանին, երբ Յիսուսի աշակերտները Թովմաս Առաքեալին կ'ըսեն, թէ Տէրը եկաւ, չի հաւատար եւ մէջ բերած խօսքս կ'ըսէ: Չեմ հաւատար, մինչեւ չշօշափեմ: Յիսուս կու գայ եւ Թովմասին կ'ըսէ. «Բեր քու մատներդ եւ դիր այստեղ ու տես իմ ձեռքերս, եւ բեր քու ձեռքդ ու մտցուր կողիս մէջ, անհաւատ մի ըլլար, այլ հաւատացեալ»: Թովմաս տեսնելով կը հաւատայ եւ կ'ըսէ. «Տէր իմ եւ Աստուած իմ»: Յիսուս այս խօսքին կը պատասխանէ. «Որովհետեւ դուն զիս տեսար, հաւատացիր, երանի անոնց, որ չեն տեսներ եւ սակայն կը հաւատան» (Յովհ. 20:24-29):

Քրիստոնէութիւնը նոր եւ արմատական յեղաշրջում բերաւ անմահութեան գաղափարին: Ան անմահութիւնը դարձուց պայծառ իրողութիւն մը, հաստատելով Յիսուսի Յարութեան դէպքին

վրայ: Քրիստոնէութիւնը եղաւ եւ է՛ այն միակ կրօնը, որ բոլոր դարերու մարդոց միտքը զբաղեցնող Յոբ երանելիի դասական հարցումին՝ «Եթէ մարդը մեռնի, նորէն պիտի կենդանանա՞յ» (Յոբ 7:9-10), կը պատասխանէ դրականապէս, յայտարարելով՝ «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»:

Այսպիսով քրիստոնէութիւնը լուսաւոր կեանքի մը արշալոյսը բացաւ մեղաւոր եւ յուսահատ մարդկութեան առաջ, որ անգլիացի մեծ բանաստեղծ Պայրոնի նման կ'ըսէ, թէ՛ «Անմահութիւնը կը ցրէ բոլոր ցաւերս, կը սրբէ արցունքներս եւ խորքէն լսողոյ յաւիտենական որոտի պէս ականջիս կը հնչեցնէ այս ճշմարտութիւնը՝ «Դուն պիտի ապրիս յաւիտեան»:

Մեր ժողովուրդին կեանքէն ներս տեղ գտած է «Թովմաս ըլլալու» մասին խօսելիքները: Վստահութիւն փնտռող մարդիկ, մանրագրնին կերպով հարցերը քննելէն ետք, դարձեալ թերահաւատութեամբ կը մօտենան պատմածներուն: Այսպիսի մարդիկ ամէն ըսածը կ'սկսածի տակ կ'առնեն ու չեն հաւատար մինչեւ անձամբ չստուգեն: Ժողովուրդը այդպիսիներուն կը դիմէ ըսելով. «Ինչ է, Թովմա՞ս՝ եղար»:

Տարեցները կը պնդեն, որ հաւատքի մասին եղածը պէտք չէ մանրամասն քննել, այլ պէտք է ուղղակի հաւատալ:

Պատկերացուցէք, թէ մեզմէ մէկը շաբաթը կամ ամիսը մէկ Կիրակի կու գայ եկեղեցի, կ'աղօթէ, մոմ կը վառէ, գանձանակին մէջ իր համեստ գումարը կը դնէ, նոյնիսկ Սուրբ Հաղորդութիւն կը ստանայ, այս բոլորէն ետք, կը կարծէ՞ք, որ ան կրնայ ըսել «Ես հաւատացեալ եմ»: Անշուշտ, ո՛չ: Ինչո՞ւ, որովհետեւ քրիստոնէայի հաւատքին հիմքն ու սկիզբը ամենօրեայ աղօթքին մէջ է: Ուրեմն պարզապէս եկեղեցի գալով, չի նշանակեր, թէ մենք ամբողջովին մեր հաւատքը կը ցուցաբերենք եւ կրնանք ըսել, թէ մենք հաւատացեալ ենք: Հաւատացեալ ըլլալ կը նշանակէ՝ հետեւիլ Յիսուսի օրինակին. Անոր օրինակին հետեւիլ կը նշանակէ՝ օգնել կարիքաւորին, խնամել հիւանդին, այցելել բանտարկեալներուն, մխիթարել սգաւորին, սիրել իր նմանին, այսինքն՝ բարի եւ արդար գործեր կատարել:

Յիսուս մեռաւ մարդոց հոգիներուն փրկութեան համար եւ Իր հրաշափառ Յարութեամբ նոր իմաստ մը ստացաւ. Անոր Անձին գոհաբերութիւնը: Ուստի ընտանեկան կեանքէն ներս եւս ծնող-

ներու անձի գոհաբերութեան գերագոյն օրինակը պիտի հանդիսանայ մեր Տէրը:

Այս ուրախ օրուան պատգամն է, որ ամէն հայ քրիստոնէայ իր աղօթքը նուիրէ մանաւանդ հայ ընտանիքին սրբութեան եւ մաքրութեան: Թերահաւատ մի ըլլաք Թովմաս Առաքեալին նման, թէ այս օտար ափերուն մէջ անկարելի է հայ ընտանիքի սրբութիւնը պահպանել: Փորձենք ամենաչնչին հնարաւորութիւնը անգամ օգտագործել հայ ընտանիքի դիմագիծը պահելու համար:

Այս երկիրը տուած է ազատութիւն, ստեղծել ամէն ինչ, որպէսզի ամէն ժողովուրդ, որ բնակի հոս, իրեն խորթ չզգայ ու կարենայ պահպանել իր արանդութիւնները, սովորութիւնները եւ հոգեւոր կեանքը: Ուրեմն օգտուինք առիթէն եւ մեր զաւակներուն ճանապարհի ուղին գծենք այդ ձեւով՝ հայ մնալու, հայութիւնը պահպանելու եւ մեր ընտանիքի սրբութիւնը իր բարձրութեան վրայ պահելու համար:

Օտարը այդ չըներ, մենք պիտի ընենք եւ վստահ եղէք, եթէ մենք քայլը կատարենք, Աստուած անպայման մեզի հետ պիտի ըլլայ: Մեր Տիրոջ Յարութիւնը մեզի նոր կեանք մը պարգեւեց եւ ես աւելի քան վստահ եմ, որ մեր ազգին աւելիով պիտի պարգեւէ: Վկայ է մեր ողբերգական, բայց փառաւոր պատմութիւնը: Կը մնայ մեզի աղօթել եւ միշտ աղօթել, որ Աստուած մեզի տայ հոգիի արիութիւն, միտքի ու սիրտի հանգստութիւն եւ հաւատքի զօրացում:

Նոր Կիրակիի կամ Կրկնազատիկի այս գեղեցիկ օրը կրկին անգամ ցնծութեամբ եւ ուրախութեամբ բացականչենք՝

**«Քրիստոս Յարեալ ի մեռելոց» եւ ստանանք յաղթական պատասխանը՝ «Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Ամէն:**

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան  
Հոգեւոր հովիւ




## Nouveau dimanche ou nouvelle Pâques

### Incrédulité de Thomas

Je ne croirais pas au nouvel ordre de la femme. "Si je ne vois pas la marque des ongles sur ses mains et ne mets pas mes doigts à la place des ongles et ne touche pas mon côté avec sa main, je ne vais pas croire." (Jean, 20 :25)

Bien-aimés,

Jean 20: 24-29 parle du scepticisme de l'apôtre Thomas. Selon l'Évangile, lorsque les disciples de Jésus ont dit à Thomas l'Apôtre que le Seigneur était venu, il n'a pas cru et a dit: Je ne croirai pas tant que je ne le toucherai pas. Jésus vient et dit à propos de Tov: "Apportez vos doigts et mettez-les ici et voyez mes mains, et apportez votre main et posez-la sur mon côté. Ne soyez pas sceptique, mais croyez." Voyant Thomas, il a cru et a dit : "Mon seigneur et mon Dieu. " Jésus répond à cette question: "Car tu m'as vu et tu as cru: bienheureux ceux qui n'ont pas vu et qui ont cru" (Jean 20: 24-29).



Jésus vient et dit à propos de Tov: "Apportez vos doigts et mettez-les ici et voyez mes mains, et apportez votre main et posez-la sur mon côté. Ne soyez pas sceptique, mais croyez." Voyant Thomas, il a cru et a dit : "Mon seigneur et mon Dieu. " Jésus répond à cette question: "Car tu m'as vu et tu as cru: bienheureux ceux qui n'ont pas vu et qui ont cru" (Jean 20: 24-29).

Le christianisme a apporté une révolution nouvelle et radicale à l'idée d'immortalité. Il a fait de l'immortalité une réalité, confirmant la réalité de Jésus. Le christianisme est devenu et est la seule religion qui répond positivement à la question classique de Job le bienheureux, qui occupe l'esprit de tous les croyants: "Si un homme meurt, revivra-t-il?" (Job 7: 9-10). "Il est ressuscité des morts."

Ainsi, le christianisme a ouvert l'aube d'une vie brillante à une humanité pécheresse et désespérée qui, comme le grand poète anglais Byron, dit: "L'immortalité dissipe toutes mes peines, essuie mes larmes et la vérité éternelle entendue des profondeurs." Tu vivras pour toujours. Nos gens ont une façon de parler "d'être Thomas" dans leur vie. Des personnes remettent en question tout ce qu'elles disent et n'y croient pas avant de les avoir testées personnellement. Les gens se tournent vers ces personnes en disant: "Quel est le problème, Thomas?" Les personnes âgées soutiennent que ce qui est cru ne doit pas être examiné en détail, mais doit simplement être cru.

Imaginez que l'un de nous vienne à l'église une fois par semaine ou un mois, prie, allume une bougie, dépose son modeste argent au trésor, et reçoit même la Sainte Communion. Après tout cela, pensez-vous qu'il peut? Pour dire: «Je suis croyant». Certainement pas. Pourquoi? Parce que le fondement et le début de la foi chrétienne sont dans la prière quotidienne. Ce n'est pas parce que nous

venons à l'église que nous croyons pleinement en nous-mêmes et que nous pouvons dire que nous sommes croyants.

Être croyant signifie suivre l'exemple de Jésus. Suivre son exemple signifie aider les nécessiteux, soigner les malades, rendre visite aux prisonniers, reconforter les endeuillés, aimer ceux qui sont comme lui, c'est-à-dire faire de bonnes et justes actions.

Jésus est mort pour sauver l'âme des hommes, et sa résurrection miraculeuse a donné un nouveau sens à son sacrifice. Par conséquent, notre Seigneur sera l'exemple suprême du sacrifice des parents dans la vie de famille.

C'est le message de ce jour heureux que chaque chrétien arménien doit offrir ses prières, en particulier à la sainteté et à la pureté de la famille arménienne. Ne soyez pas aussi sceptique que l'apôtre Thomas qu'il est impossible de préserver le caractère sacré de la famille arménienne sur ces côtes étrangères. Essayons d'utiliser la moindre opportunité pour garder l'image de la famille arménienne. Ce pays a donné la liberté, tout créé pour que chaque nation, il ne se sente pas aliéné de lui-même et puisse préserver ses traditions, ses coutumes et sa vie spirituelle. Profitons donc de l'occasion pour conduire le chemin de nos enfants de cette manière: rester arménien, préserver l'identité arménienne et préserver le caractère sacré de notre famille à son apogée.

Dans ces rives étrangères, nous le ferons et soyez sûrs que si nous faisons le pas, Dieu sera certainement avec nous. La résurrection de notre Seigneur nous a donné une nouvelle vie, et je suis plus que sûr qu'Il donnera plus à notre nation. Notre histoire tragique mais glorieuse en témoigne. Il ne nous reste plus qu'à prier et toujours prier pour que Dieu nous donne le courage de l'âme, la paix de l'esprit et du cœur et le renforcement de la foi.

En ce beau jour du nouveau dimanche ou de Pâques, crions encore une fois avec joie: **"Le Christ est ressuscité des morts" et recevons la réponse victorieuse: "Béni soit la résurrection du Christ". Amen:**

**Avec la bénédiction du**

**Rév. ԲԴ David Margaryan, Prêtre Paroissial**



## ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտէի՞ք թէ.-

- **Ո՞ր պահուն հացը եւ գինին կը դառնան Քրիստոսի իրական Մարմինն ու Արիւնը:**

Ըստ Հայոց Եկեղեցւոյ վարդապետութեան՝ Ս. Պատարագի ժամանակ, երբ դպրաց դասը կ'երգէ շարականի հետեւեալ բառերը. «Քու առջեւ, Տէ՛ր: Աստուծոյ Որդի, որ կը պատարագուիս Հօր հաշտութեան համար, որպէս կենաց հաց կը բաշխուիս մեր մէջ, Քու սուրբ արեանդ հեղմամբ կ'աղաչենք Քեզի, ողորմի՛ր Քու արիւնովդ փրկուած հօտին», պատարագիչ հոգեւորականը ծածուկ աղօթքին մէջ բարերար Աստուծմէ կը խնդրէ, որ Ան ուղարկէ Էակից Ս. Հոգին, որպէսզի Անոր ներգործութեամբ Ս. Սեղանին վրայի հացը եւ գինին փոխարկուին Քրիստոսի Մարմնին եւ Արեան:

Այդ ժամանակ քահանան կը վերցնէ հացը, երեք անգամ խաչանիշով կ'օրհնէ ըսելով. **«Անոր հետ օրհնելով այս հացը՝ ճշմարտապէս դարձուր մեր Տէր եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի մարմինը»:** Ապա ան կը վերցնէ գինիով լեցուն բաժակը, կրկին երեք անգամ խաչանիշով կ'օրհնէ՝ ըսելով.

**« Եւ օրհնելով այս բաժակը՝ ստուգապէս դարձուր մեր Տէր եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Արիւնը»:** Այս բոլորէն յետոյ մաղձմայով հացը կը դնէ բաժակին վրայ, երեք անգամ խաչանիշով կ'օրհնէ եւ կ'ըսէ. **«Անոր հետ օրհնելով այս հացը եւ գինին՝ ճշմարտապէս դարձուր մեր Տէր եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը՝ փոխարկելով Քու Ս. Հոգիովդ»:** Այս պահէն սկսեալ՝ արդէն գործ ունինք ոչ թէ սովորական հացի եւ գինիի հետ, այլ՝ Տիրոջ իրական Մարմնին եւ Արեան: Այսուհետեւ, այս գիտակցութեամբ պիտի հետեւի հաւատացեալը Ս. Պատարագին՝ Տիրոջմէ խնդրելով արժանի դարձնել իրեն՝ ճաշակելու Անոր Մարմինն ու Արիւնը:



# ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

## Կ'ԱՂԱՉԵՄ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ԶՕՐԱԻՈՐ ԱՂՕԹՔ

Կ'աղաչեմ, Տէ՛ր Յիսուս,  
 եւ կ'իյնամ Քու սուրբ խաչիդ առջեւ.  
 Անոր բարեխօսութեամբ ընդունիր աղաչանքներս,  
 կատարե ինդրանքներս եւ անորմով զօրացուր  
 զիս իմ կոչմանս մէջ, որուն համար կանչուեցայ,  
 ու Քու պատուիրաններուդ մէջ, որոնք սորվեցայ:  
 Տուր ինծի անորմով զօրութիւն եւ ժուժկալութիւն,  
 զգաստութիւն, առողջութիւն եւ պահպանութիւն իմ անձիս  
 օր ու գիշեր եւ ամէն ժամ՝ ննջելէն ու արթննալէն,  
 ընթանալէն եւ կանգ առնելէն, գործերուն ու տքնութիւններուն մէջ,  
 աղօթքի եւ պահքի մէջ, նաեւ՝ Քու կամքդ կատարելով:  
 Ան թող ամուր բերդ ըլլայ ինծի եւ հզօր աշտարակ՝  
 թշնամիին առջեւ: Զարդարե զիս ասով՝ իբրեւ հոգեղէն զարդով  
 եւ իմանալի լոյսով:  
 Եւ Գաբրիելի ահեղ բարբառին օրը՝ սուրբ խաչդ երեւելով,  
 լուսաւորե խաւարած հոգիս՝ լոյսով բարձրանալու անմահ Փեսայիդ.  
 ընդառաջ՝ խառնուելու հայրապետներու երամներուն,  
 մարտիրոսներու դասերուն եւ հրեշտակներու զունդերուն:  
 ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

## STRONG PRAYER TO OUR LORD JESUS CHRIST

I beseech thee, Lord Jesus, and fall before thy holy Cross.  
 Accept my supplications through His intercession, fulfill my requests,  
 and strengthen me in my calling, for which I was called,  
 and in Your commandments, which I have learned.  
 Give me the strength and restraint, vigilance, health and protection of my  
 personal day and night and every hour,  
 from going to sleep and waking up, going and stopping,  
 in deeds and trials, in prayer and fasting,  
 as well as doing Your will.  
 May he be a stronghold for me and a mighty tower in the face of the enemy.  
 Decorate me by saying, as a spiritual adornment, and by a known light.  
 And on the day of the terrible dialect of Gabriel, when the Holy Cross  
 appears, enlighten my darkened soul to rise in the light of your immortal  
 Groom, to mingle with the flocks of patriarchs, the classes of martyrs,  
 and the regiments of angels.

SAINT YEPREM ASORI

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ  
ԿԻՐԱԿԻ, 19 Ապրիլ 2020



Տ. եւ Տիկ. Հրանդ եւ Լալա Գրիգորեանի եւ ընտանիքին,  
Տ. եւ Տիկ. Նորիկ Գրիգորեանի եւ Զուարթ Մինասեանի  
եւ զաւակներուն,

Տ. եւ Տիկ. Աւագ եւ Սուսան Գրիգորեանի,  
Տ. եւ Տիկ. Գրիգոր եւ Անէթա Գրիգորեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ եղբոր եւ հօրեղբոր  
**ՊԱՂՏԱՍԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ**  
**(BAGHDASAR GRIGORYAN)**

Հոգւոյն ի հանգիստ:



Տիկ. Սիրանուշ Համբարձումեանի,  
Տ. եւ Տիկ. Սրապիոն մինասեանի եւ Սիրանուշ  
Համբարձումեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ծնողաց եւ հաւազատներուն  
**ՄԻՔԱՅԷԼ ՀԱՄԲԱՐԶՈՒՄԵԱՆԻ**  
**(MIKAEL HAMPARTZOUMYAN)**  
**ԶՈՒԱՐԹ ՉԻՏԱՐԵԱՆԻ**  
**(ZIVART CHIDARYAN)**  
**ԱՐՏԱԻԱԶԴ ՄԻՆԱՍԵԱՆԻ**

(ARDAVAZT MINASYAN)

ԱՐԱՔՍԻԱ ՄԻՆԱՍԵԱՆԻ

(ARAKSYA MINASYAN)

ՔՐԻՇԱ ՄԻՆԱՍԵԱՆԻ

(KRISHA MINASYAN)

ԿՐԷԹԱ ՄԻՆԱՍԵԱՆԻ

(GRETТА MINASYAN)

ԼԵՒՈՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

(LEVON HARUTYUNYAN)

ՍԱՐԳԻՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ

(SARKIS ANTREASYAN)

ԵՒ

ՌԵՇՏՈՒՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

(RESHDUONI MESROBYAN)

Հոգիներուն ի հանգիստ:



Տ. եւ Տիկ. Հրանդ եւ Լալա Գրիգորեանի եւ ընտանիքին,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ծնողաց եւ հարազատներուն՝

ՊԱՂՏԱՍԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ  
(BAGHDASAR GRIGORYAN)

ԶԱՐԴԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

(ZARTAR GRIGORYAN)

ՆՈՒՇԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

(NOUSHIG GRIGORYAN)

ԳԱՐԵԳԻՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

(KAREKIN GRIGORYAN)

ՄԵԼԻՔ ՔՈՉԱՐԵԱՆԻ

(MELIK KOTCHARYAN)

ԱՒԵՏԻՔ ՔՈՉԱՐԵԱՆԻ

(AVEDIK KOTCHARYAN)

ԱՐՓԻԿ ՔՈՉԱՐԵԱՆԻ

(ARPIG KOTCHARYAN)

ԵՒ

ՃԷՅՐԱՆ ՔՈՉԱՐԵԱՆԻ  
(JEYRAN KOTCHARYAN)

Հոգիներուն ի հանգիստ:



Տ. եւ Տիկ. Արտաւազդ Մինասեանի եւ Անահիտ Ղուկասեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ հորեղբոր

**ՌՈՊԵՐԹ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ**

(ROBERT GHOUGASYAN)

Հոգւոյն ի հանգիստ:



Տ. եւ Տիկ. Օննիկ եւ Մարի Փիլաֆեաններու,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ծնողաց, մեծ ծնոջաց, եղբոր եւ մօրեղբոր

**ԱՐՏԱՇԷՍ, ՍԻՐԱՆՈՒՇ ԵՒ ՄԻՀՐԱՆ**

**ՔԷՕՐՀԱՃԵԱՆՆԵՐՈՒ**

(ARDASHES, SIRANOUCHE, & MIHRAN

KEORHADJIAN)

**ՀՈՒՓՄԻՄԷ ԵՒ ԱՐՍԷՆ**

**ՓԻԼԱՖԵԱՆՆԵՐՈՒ**

(HRIPSIME & ARSEN PILAFIAN)

**ԱՐԱՔՍԻ, ՄԻՀՐԱՆ ԵՒ ԿԱՐՊԻՍ**

**ՇԱՀԻՆԵԱՆՆԵՐՈՒ**

(ARAXI, MIHRAN, & GARBIS CHAHINIAN)

ԵՒ

**ՄԻՀՐԱՆ ԵՒ ՄԱՐԻ**

**ՔԷՕՐՀԱՃԵԱՆՆԵՐՈՒ**

(MIHRAN & MARIE KEORHADJIAN)

Հոգիներուն ի հանգիստ:

# ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

## CHURCH:

Mrs. Armine Sirinyan, Mr. Hrant Khandjian \$40

## RENOVATION FUND:

Mr. & Mrs. Aret Tasciyan \$100.

## IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

### THE LATE AGOP BEL:

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$50.

### THE LATE SYLVA MEKHGEAVAKIAN:

Mekhgeavakian Family \$1000, Mr. Alexander Lam on behalf of CIBC Business Banking \$125, Devletian Family, Mr. & Mrs. Raffi Sossoyan, Mrs. Isabel Kalpakian \$50, Mr. Edward Tawil \$40.

## REQUIEM EASTER MEMORIAL

### DAY OF THE DEAD-MERELOTZ:

#### IN MEMORY OF:

### THE LATE SONA & ARMAVENI DEMIRJIAN:

Dr. Arto Demirjian \$250.

### THE LATE TAKVORIAN FAMILY:

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$100.

### THE LATE VAROSIAN & SUKIASIAN FAMILIES:

Mrs. Nina & Mrs. Zina Varosian \$50.

### THE LATE MEREMETCI FAMILY:

Mrs. Pergruhi Meremetci \$100.

### THE LATE VAROSIAN FAMILY:

Mrs. Nina & Mrs. Zinaida Varosian \$50.

## HOKEHANKISD

### REQUIEM SERVICES:

### THE LATE PILAFIAN FAMILY:

Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$100.

### THE LATE BAGHDASAR GRIGORYAN:

Mr. & Mrs. Norik Grigoryan & Zivart Minasyan \$100.

### YOUGHAKIN EASTER:

Devletian Family \$1500, Mr. Levon Senoglu, Mrs. Houry Hakimian \$250, Mr. & Mrs. Norik Grigoryan & Zivart Minasyan \$300, Mr. & Mrs. Varouj & Hasmig Margossian, Mr. & Mrs. Garo & Michelle Boghosian, Mrs. Anahit Ghukasyan \$200, Mr. & Mrs. Roupén & Meline Arsever, Mr. & Mrs. Hratch



& Salpie Nerdjivanian, Mrs. Silva Karaoghlanian \$100, Mr. & Mrs. Avedis & Mary Basmadjian, Mr. & Mrs. Garabed & Sylvia Nazirgianian, Mrs. Nina Varosian, Mrs. Zina Varosian, Mrs. Karmen Ketli, Mr. & Mrs. Antranik & Verjin Sivaslioglu \$50.

**ՄՐՏԱԲՈՒԽ ՆՈՒԻՐԱՏՈՒԴԹԻՒՆՆԵՐ  
Ի ՆՊԱՍՏ**

**ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՅՅԱՐՈՒԹԵԱԼ**

Գիտակցելով այս օրերու դժուարութեան, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիք հաւատացեալներէն, կատարել իրենց Ջատկուայ իւղագինի կամ որեւէ սրտաբուխ նուիրատուութիւն ի նպաստ Ս. Եկեղեցոյ առաքելութեան նաեւ՝ հետեւեալ միջոցներով՝



այցելելով Եկեղեցոյ կայքէջը  
Website - [Saintgregory.ca](http://Saintgregory.ca)  
Շնորհակալութիւն

**YOUR HEARTFELT DONATIONS  
FOR THE SUPPORT OF OUR CHURCH:**

Concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.

Your donations can also be made through the Church website – [saintgregory.ca](http://saintgregory.ca)

by:

Thank You!



**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ  
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒՆ**

**Ապրիլ – Avril**

- 20, Երկուշաբթի – Թ. ՕՐ ՅԻՆԱՆՑ  
**Lundi 20 – 9ème jour de la période des 50 jours  
qui vont jusqu'à la Pentecôte**
- 21, Երեքշաբթի – Ժ. ՕՐ ՅԻՆԱՆՑ  
**Mardi 21 – 10ème jour**
- 22, Չորեքշաբթի – ԺԱ. ՕՐ ՅԻՆԱՆՑ  
**Mercredi 22 - 11ème jour**
- 23, Հինգշաբթի – ԺԲ. ՕՐ ՅԻՆԱՆՑ  
**Jeudi 23 – 12ème jour**
- 24, Ուրբաթ - ԺԳ. ՕՐ ՅԻՆԱՆՑ  
**Vendredi 24 – 13ème jour**
- 25, Շաբաթ- ԺԴ. ՕՐ ՅԻՆԱՆՑ  
**Samedi 25 – 14ème jour**

**ՇԱԲԹՈՒՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ**

Աղօթքը բժշկութիւն է, սակայն երբ չենք գիտեր ինչպէս օգտագործել այդ բժշկութիւնը, ապա չենք կրնար օգտուիլ անոր բուժիչ զօրութենէն:

Յովիան Ոսկեբերան

Որքան շատ սեր, իմաստութիւն, գեղեցկութիւն, բարութիւն դուք ձեր մէջ գտնեք, այնքան անելի շատ նոյնը կը նկատեք շրջապատող աշխարհին մէջ:

Մայր Թերեզա

Քրիստոսին կը տեսնէ ան, ով կ'անտեսէ հարստութիւնը :

Եզկիկ Կողբացի

«Եթէ չես ուզեր աղօթել, անհրաժեշտ է՝ որ դուն քեզի հարկադրես, սուրբ հայրերը կ'ըսեն, որ հարկադրաբար աղօթքը անելի է, քան ինքնակամ աղօթքը: Դուն չես ուզեր, բայց դուն քեզ հարկադրէ, չէ որ Երկինքի Արքայութիւնը ուժով կը վերցնեն»: (Մատթ. 11.12)

Ս. Ամբրոսիոս Օփթիմացի

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար St.  
Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Ս. ԵՒ ԱՆՄԱՅ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՅԱՆԳԻՍ  
LA SAINTE MESS ET L'OFFICE DE REQUIEME

Ուղիղ հեռարձակում - Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Կիրակի, 19 Ապրիլ 2020

Ս. Պատարագ առաւօտեան ժամը 10:30-ին

**Dimanche, le 19 Avril 2020**

**La Sainte Messe à 10:30**

Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին

**Office de Requieme à Midi**

Հոգեհանգստեան պաշտօնի համար հաճեցէք հեռաձայնել  
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

**Pour un service de requiem, veuillez appeler  
le bureau de l'Église au (514) 279-3066.**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066 / Fax: (514)  
279-8008

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)



**ՈԳԵԿՈՉՈՒՄ  
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ  
105-ԱՄԵԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ  
Ուղիղ հեռարձակում - Live**



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Պատարագ եւ Բարեխօսական Կարգ  
Սրբոց Նահատակաց  
La Sainte Messe et Service d'intercession  
de nos Saints Martyrs**



**Ուրբաթ, 24 Ապրիլ 2020  
առաւօտեան ժամը 10:30-ին:  
Vendredi, le 24 Avril 2020 à 10h30.**

Պատարագիչ՝  
Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ  
Célébrent:

Rèv. P. David Margaryan, Prêtre Paroissial

Donation en ligne - Web site: [saintgregory.ca](http://saintgregory.ca)  
615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066 / Fax: (514)  
279-8008  
[stgregorvchurch@gmail.com](mailto:stgregorvchurch@gmail.com)



ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

En direct

Live



**Շաբաթ, 25 Ապրիլ 2020**

Երեկոյեան ժամը՝ 5-ին  
Ժամերգութիւն

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանսիս  
Մայր Տաճարին մէջ:



Ուղիղ հեռարձակում – Facebook Live

**Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**



# ԵՎԷՔ ՊԱՅԾԱՌԱՅՆՆԷՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՅԻՆ



Միրելի հաւատացեալներ,  
Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն զեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ'ուղղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւէտ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարել Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

Հովիւ  
եւ  
Օխական Խորհուրդ



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

### ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կընաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.հ. ժամը 3:



### PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2